



Աշոցք

Գյուղական համայնք ՀՀ Շիրակի մարզում: Գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի վերին հոսանքի ավազանում: Աշոցք գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի առաջին կեսին՝ Արևմտյան Հայաստանից գաղթված բնակչության կողմից: Բնակավայրը սկզբում կոչվել է Ղզլոռ, ապա Ղուկասյան և միայն 1990 թվականից վերանվանվել Աշոցք:

Աշոցքը մինչև ՀՀ վերջին վարչատարածքային բաժանումը համանուն շրջանի շրջկենտրոնն էր:

Համայնքի վարչական տարածքը 3298,59 հա է, որից 2897,70 հա գյուղատնտեսական նշանակության, 319,69 հա՝ բնակավայրի, 32,84 հա՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 9,34 հա՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակայության, 3,05 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 20,49 հա՝ անտառային, 13,13 հա՝ ջրային հողեր են:

Համայնքի աշխարհագրական դիրքը բարձր լեռնային է, տարածքի ռելիեֆը բարդ՝ համեմատաբար ցածրադիր՝ Աշոցք գետի գյուղին մերձակա ավազանում և բարձր՝ հյուսիս-արևելյան հատվածում: Կլիման բարեխառն է բնորոշ կարճատև, զով ամառով և երկար ու ցուրտ ձմեռով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 4,1 է, բացարձակ առավելագույնը՝ 32, նվազագույնը՝ -36: Սառնամանիքների տևողությունը 167 օր, ձյունածածքի տևողությունը 154 օր: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 619 մմ:

Բնակավայրը ծովի մակերևույթից բարձր է 2006-2039 մետր: Համայնքի վարչական տարածքի ամենացածր կետը 1969 մետր է, առավելագույնը՝ 2750 մետր:

Աշոցքը գտնվում է 8-10 բալանոց սեյսմիկ ակտիվ գոտում:

Աշոցքով է անցնում Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհը:

Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 164 կմ է, մարզկենտրոնից՝ 36 կմ:
Այն ուղիղ գծով հեռու է Վրաստանի սահմանից 12 կմ, իսկ Թուրքիայի սահմանից՝ 20 կմ:

Համայնքում գործում են մշակույթի տուն, հանրակրթական դպրոց, հիվանդանոց, արվեստի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, գանձապետարան, բանկի մասնաճյուղ, փոստ, կապի բաժանմունք, եկեղեցի, հասարակական, արտադրական նշանակության կազմակերպություններ, ձեռնարկություններ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներ:

Համայնքի բնակչությունը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2888 մարդ, այդ թվում՝ 1480 տղամարդ, 1408 կին: Բնակչության կազմում 253-ը 0-6 տարեկան են, 340-ը՝ 7-17 տարեկան, 2123-ը 18-64 տարեկան, 255-ը 65 և բարձր:

Համայնքում 2010 թվականի ընթացքում գրանցվել է 31 ծնունդ, 15 մահ, 13 ամուսնություն: 77 ընտանիքներ նպաստառու են: Արտագնա աշխատողներ են 115-ը, ժամանակավոր բացակայողներ՝ 158-ը, ժամանակավոր բնակվողներ /չգրանցվածներ/ 604-ը, թոշակառուներ՝ 264-ը, հաշմանդամներ՝ 92-ը, գրանցված գործազուրկներ՝ 87-ը, գրանցված աշխատանք փնտրողներ՝ 166-ը: Բնակարանի կարիքավոր են 184 ընտանիքներ, որոնք ապրում են փայտաշեն բազմաբնակարան շենքերում և տնակներում, ինչպես նաև մեկ վթարային բազմաբնակարան քարային շենքում:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մի մասն էլ ընդգրկված է առողջապահության, կրթության, մշակույթի, առևտրի, սպասարկումների և այլ ոլորտներում:

Համայնքի 792 տնտեսություններից 424-ը անասնազուրկ են, 243-ը հողազուրկ: Աշխատունակ բնակչության 53 %-ը /1246 մարդ/ չունի մշտական զբաղվածություն: Առաջնահերթ լուծում են պահանջում հետևյալ հիմնախնդիրները. գյուղի բարեկարգում, նոր աշխատատեղերի ստեղծում, բնակարանային շինարարության իրականացում, համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում, մարզադաշտի կառուցում, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղգործիքների հայթայթում, ներհամայնքային ջրահեռացման ցանցի վերանորոգում, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Կլիմա

Կլիման բարեխառն է, բնորոշ կարճատև զով ամառով և երկար ու ցուրտ ձմեռով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը 4,1 ցելսիուս է, բացարձակ առավելագույնը՝ 32, բացարձակ նվազագույնը՝ -36:^[4] Սառնամանիքների տևողությունը 167 օր, ձյունածածկի տևողությունը 154 օր^[4]: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 619 մմ:

Բնակչություն

Աշոցքի ազգաբնակչության փոփոխությունը.^[5]

Տարի	1873	1886	1931	1959	1970	1979	2001	2004
Բնակիչ	438	602	916	1459	1693	2069	2378	3006

Երկիր	 Հայաստան
Մարզ	Շիրակի
Այլ անվանումներ	Ղուկասյան
Մակերես	32.9 կմ ²
Բարձրություն ծովի մակարդակից	1990 մ
Խոսվող լեզուներ	Հայերեն
Բնակչություն	2491 ^[1] մարդ(2012)
Ազգային կազմ	Հայեր
Ժամային գոտի	UTC+4
Հեռախոսային կոդ	+374 245 ^[2]
Փոստային ինդեքս	2801 ^[3]